

- 75 Այսուիկ փոխեալ նա առ անեղ իւր էն
Որպէս ամենայն մարդկան է օրէն ,
Թողոյր զիս որք աստ Թափուր ի շնորհէն ,
Զուրկ յոտս իւր կալոյ յողջոյն ինքենէն :
- 76 Անդանօր որպէս հաւատ իմ եւ յոյս
Սիրովս անդորրեն զեռանդրն հոգւոյս ,
Գլտեալ է վաղ իսկ հոգի նորին լոյս
Անհուն գլթութեամբ ծայրագոյն բարւոյս :
- 77 Այս ինչ դէպ լինէր ի մէջ գիշերի ,
Թոր եզրիւր նախկին օրն Հոկտեմբերի ,
Ի կատարածի նախնի քառորդի
Առաջնոյ ժամու առուն երկրորդի :
- 78 Դիական Սարգսի ծիծաղ կերպարան
Տեսողացն որոյ յակունսն էր նըշան
Թէ փոխիւր յաստեաց նա զըւարճ, հաւան
Զունեւով յինքեան բիծ ինչ խրղճական :
- 79 Իսկ ի լուսանալ նոյն առաւօտու
Երկրորդի ամնոյն յաւուր շաբաթու
Եպիսկոպոսեան զարգարեալ զարդու
Դընիւր դին ի նաշ ձեռամբ երեցու :
- 80 Զոր եւ բազմէին նախ ի տան նորին ,
Ուր հաւատացեալք իսկոյն խմբէին ,
Վասն հոգւոյ նորին հանգիստ հայցէին ,
Թողորմութենէն համայնց ըստեղծչին :
- 81 Ապայ ի ճաշու ժամու բովանդակ
Հայոց ւ՛ ալլազանց խմբեալ գումարտակ
Վառեալ զինուորաց ւ՛ երեցանց դասակ
Դիոյն Թափօրի հանդերձէին կարգ :